Հոդված 21. Գլխավոր հարկադիր կատարողի լիազորությունները

1. Գլխավոր հարկադիր կատարողը՝

1) ղեկավարում և հսկողություն է իրականացնում հարկադիր կատարման ծառայության գործունեության նկատմամբ.

2) ապահովում է սույն օրենքի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև համապատասխան նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) ընդունում է հարկադիր կատարման ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ, տալիս է ցուցումներ.

4) առաջարկություն է ներկայացնում համապատասխան նախարարին՝ ծառայության կառուցվածքի վերաբերյալ.

5) միջնորդություն է ներկայացնում համապատասխան նախարարին՝ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալին խրախուսելու կամ նրա նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու մասին.

6) քննում է հարկադիր կատարողների նկատմամբ բերված բողոքները, վերացնում է հարկադիր կատարողների անօրինական որոշումները.

7) նշանակում և անցկացնում է ծառայողական քննություններ.

8) ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես դադարեցնել իր կողմից պաշտոնի նշանակված ծառայողի լիազորությունները.

9) իրականացնում է հարկադիր կատարման ծառայության նյութատեխնիկական ապահովությունը.

10) օրենսդրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում տնօրինում է ծառայության դեպոզիտ հաշիվը.

11) սահմանում է մարզային (Երևանի քաղաքային) բաժինների պետերի կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները.

12) կազմակերպում է ծառայողների մասնագիտական և հատուկ ուսուցումը.

13) իր իրավասության սահմաններում խրախուսում կամ կարգապահական տույժի է ենթարկում հարկադիր կատարման ծառայության՝ իր կողմից պաշտոնում նշանակված ծառայողներին.

14) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան նախարարին՝ դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրության կատարելագործման վերաբերյալ:

Գլխավոր հարկադիր կատարողն ունի նաև օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորություններ:

2. Գլխավոր հարկադիր կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության խնդիրների իրականացման համար:

3. Գլխավոր հարկադիր կատարողի բացակայության ժամանակ նրա լիազորություններն իրականացնում է նրա տեղակալը: Գլխավոր հարկադիր կատարողի տեղակալը կատարում է նաև գլխավոր հարկադիր կատարողի այլ հանձնարարություններ:

Deleted: և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցները